ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/298

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ն. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19756-2020 գրությամբ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **Գործի նախապատմությունը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.12.2020թ.-ի գրության հիման վրա, 29.12.2020թ.-ին «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 29.12.2020թ.-ին:

29.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/298 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին և 27.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2021թ.-ին:

2. **«Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.**

«Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 25.12.2020թ.-ին գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2020 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեղի է ունեցել տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռք բերման նպատակով գնանշման հարցման ԿՄՆԳՄԴ-ԳՀԱՇՁԲ _20/02 ծածկագրով ընթացակարգի մրցույթը:

Ղեկավարվելով «Գնումների մասին օրենքի» 38-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի դրույթներով, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017

թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով մասնակիցները հրավիրվել էին միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունների արդյունքում նվազագույն գին է առաջարկել «Գայանե Մելիքյան» ԱՁ-ն:

2020 թվականի սեպտեմբերի 18-ին «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գայանե Մելիքյան» ԱՁ-ի միջև կնքվել է պայմանգիր և 2020 թվականի սեպտեմբերի 18-ին թիվ 1 համաձայնագիրը:

Ելնելով երկրում ստեղծված ռազմական իրավիճակից բազմաթիվ անգամ բանավոր կերպով, հեռախոսազանգերի միջոցով փորձել ենք կապ հաստատել վերոնշյալ կազմակերպության հետ առաջարկվելով կնքել երկրորդ համաձայնագիր, սակայն այդպես էլ չեն ներկայացել, չենք կարողացել կապ հաստատել իրենց հետ:

Հինք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը՝ սույն թվականի դեկտեմբերի 24-ին տանիքի վերանորոգման աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում և ուղարկվել նաև ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստին: Ձեզ ենք ներկայացնում տվյալ գնման գործընթացի հետ կապված բոլոր փաստաթղթերը: Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք տրամադրել այլ անհրաժեշտ տեղեկություններ կամ փաստաթղթեր.»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 13.01.2021թ.-ին ներկայացված մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գայանե Մեփքյան» Ա/Ձ-ի կողմից ՍՑ-ԼՕ-2020/298 ծածկագրով ընթացակարգի որպես պատասխան ներկայացրած ղիրքորոշման վերաբերյալ տեղեկացնում ենք Ձեզ մեր ղիրքորոշումը.

1. «Գայանե Մելիքյաև» ԱՁ-ի և «Նորգյոսլի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մինչև գնանշման հարցման ձևով ԿՄՆԳԱԴ-ԳՀ-ԱՇՁԲ 20/02/01 պայմանագրի շրջանակներում

կնքվել է համաձայնագիր, որի վերջնաժամկետը լրանում էր 2020 թվականի նոյեմբերի 16-ին: «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը տեղյակ չի եղել, որ «Գայանե Մեփքյան» Ա/Ձ-ն նախապես պատվիրել է շինանյութ, այնուհետև չեղարկել այն, քանի որ դպրոցում որևէ նախապատրաստական կամ շինարարական աշխատանք նրանց կողմից չի իրականացվել:

2. Հիմք ընդունելով երկրում առկա ֆորս-մաժորային իրավիճակը հոկտեմբեր ամսվա սկզբին «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունից զանգահարել և խնդրել են «Գայանե Մեփքյան» Ա/Ձ-ի համաձայնությունը շինարարական աշխատանքները կարճ ժամկետով նետաձգելու համար: Պետք է նշել, որ կնքված համաձայնագրի ժամկետը դեռևս լրացած չի եղել, ուստի այդ ընթացքում այն երկարացնելու անհրաժեշտություն չի առաջացել, և ապատեղեկատվություն է այն պնդումը, թե «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունից զանգահարել և խնդրել են «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի համաձայնությունը պայմանագիրը երկկողմանի խզելու համար: Եթե «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը նպատակ ունենար խզել համաձայնագիրը, ապա կնքված համաձայնագրի ժամկետը լրանալուց անմիջապես հետո կկիրառեր պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետը:

3. Դեռևս նախքան կնքված համաձայնագրի ժամկետը լրանալը բազմաթիվ անգամ բանավոր կերպով քննարկել ենք, որ անհրաժեշտ է ներկայանալ և կնքել երկրորդ համաձայնագիր (ինչպես նշել էինք նախորդ գրության մեջ), կրկնում ենք համաձայնագրի խզման մասին խոսք չի եղել: Ընդհակառակը, պայմանավորված երկրում ստեղծված դժվարին ֆինանսական դրության իրավիճակով Նորգյուղի միջնակարգ դպրոցի տանիքի վերանորոգման պահանջը վերաբաշխման արդյունքում չի չեղարկվել ելնելով առաջնահերթությունների շարքում (ի տարբերություն Կոտայքի մարզի որոշ դպրոցներում նախատեսված տարբեր շինարարական աշխատանքների կասեցմանը): Հիմնական պնդումը եղել է այն, որ աշխատանքները պետք է ավարտել 2020 թվականի բյուջետային տարում, ինչին չի եղել «Գայուսնե Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից որևէ առարկություն, պատասխանել են, որ նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են, կներկայանան, կկնքեն երկրորդ համաձայնագիր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 16-ը, և կավարտեն տանիքի վերանորոգումը նշված ժամանակահատվածում:

Որպես լրացուցիչ տեղեկատվություն նշենք, որ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ն անգամ խնդրել է կանխավճար փոխանցել շինարարական աշխատանքների կատարման համար, ինչը պայմանագրով նախատեսված չէր, կամ միջնորդ հանդիսանալ շինանյութի ձեռք

բերման համար և այլն, ինչից հետո չեն ներկայացել ու հեռախոսազանգերին չեն պատասխանել:

Ընթացակարգի մասին քննարկվել է մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ, և հիմք ընդունելով պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետը՝ կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ 20/02/01 պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվել է:»:

3. «**<u>Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 29.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19756-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 11.01.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի սեպտեմբերի 02-ին «Գայանե Մելիքյան» ԱՁ-ն մասնակցել է «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ 20/02 ծածկագրով գնանշման հարցմանը՝ իրականացնելու համար «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքներ:

«Գայանե Մելիքյան» ԱՁ-ն ճանաչվել է հաղթող մասնակից և 2020 թվականի սեպտեմբերի 18-ին կնքել է պայմանագիր և համապատասխան համաձայնագիր աշխատանքների իրականացման համար:

«Գայանե Մելիքյան» ԱՁ-ն շինանյութ պատվիրելու և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան շինանյութի գնման նպատակով հրավիրել է տարբեր կազմակերպությունների գնահատման և պատվերի ձևակերպման նպատակով: «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ ձևակերպվել է համապատասխան պատվեր (կից ներկայացվում է), սակայն նախքան պատվերը ստանալը «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունից զանգահարել են և խնդրել մեր համաձայնությունը համաձայնագիրը երկկողմանի խզելու համար՝ հիմք ընդունելով երկրում առկա ֆորս-

մաժորային իրավիճակը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում առկա ռազմաքաղաքական իրավիճակում և ռազմական դրության պայմաններում պայմանագիրը կարող էր խզվել համաձայն 18.09.2020 թվականին կնքված «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման գնման N «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇԵԲ _20/02/01» պայմանագրի 7-րդ կետի մենք տվել ենք մեր բանավոր համաձայնությունը (հիմք ընդունելով նաև այն փաստը, որ երկրում առկա ռազմական դրությամբ և պատերազմական իրավիճակով պայմանավորված ընկերության աշխատակիցների զգալի մասը կամավոր հիմունքներով կամ ՄՈԲ-ի կազմում մեկնել էին ռազմաճակատ, իսկ նոր աշխատակիցների ներգրավումը խնդրահարույց էր նույն հանգամանքներից ելնելով), նաև չեղարկել ենք «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ ձևակերպված պատվերը (վերջինիս առաքումը նույնպես ուշանում էր նույն հանգամանքներով պայմանավորված): Հեռախոսազրույցի ընթացքում պայմանավորվել ենք, որ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կկազմվի համաձայնագրի խզման փաստաթուղթ, որը երկկողմանի կստորագրվի: Այս փաստը կարող է հավաստել նաև այն հանգամանքը, որ թեև կնքված համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը նոյեմբերի 16-ն էր (կից ներկայացնում եմ համապատասխան փաստաթղթերը), այնուամենայնիվ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ոչ մի պաշտոնական գրություն չի ստացվել, այն մասին, որ աշխատանքները մեր կողմից չեն սկսվում: Միայն դեկտեմբերի 23-ին ենք ստացել նամակ, որով, տեղեկացնում են որ աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար մարզպետարանի հետ քննարկման արդյունքում միակողմանի լուծարվում է պայմանագիրը:

Ինչ վերաբերվում է հեռախոսազանգերին, ապա ինձ իրոք զանգահարել են, սակայն այդ զանգերը համընկել են այն օրերի հետ, երբ ես սգում էի ինձ շատ մոտ ազգականներիս կորստի ցավը, որոնց կորցրել եմ Արցախի հանրապետությունում մղվող այս անհավասար պատերազմում: Սակայն հեռախոսազանգերից բացի կարելի էր կապ հաստատել էլեկտրոնային փոստի միջոցով, որը չի արվել:

Խնդրում ենք Ձեզ, բողոքն ուսումնասիրելիս հաշվի առնել վերոգրյալ հանգամանքները: Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ ներկայացնել նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր:»:

4. **<u>ՍՑ-LO</u>**-2020/298 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից մինչև աշխատանքների կատարման ավարտը (մոտավորապես 60 օր): Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում համաձայնագիրը կնքելու օրը, իսկ ժամկետի ավարտ՝ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օր:

v. Պատվիրատուի և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 24.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 102 ծանուցման համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքված «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պայմանագրի և 18.09.2020թ.-ին կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում պետք է կատարվեր «Նորգյուղի միջակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետը՝ կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագրի միակողմանի լուծման ծանուցումը տեղադրելով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19756-2020 գրությամբ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Նորագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքված թիվ «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից մինչև աշխատանքների կատարման ավարտը (մոտավորապես 60 օր): Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2), որի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում համաձայնագիրը կնքելու օրը, իսկ ժամկետի ավարտը՝ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օր: Պատվիրատուի և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 24.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 102 ծանուցման համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի միջև 18.09.2020թ.-ին կնքված «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ _20/02/01» ծածկագրով պայմանագրի և 18.09.2020թ.-ին կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում պետք է կատարվեր «Նորգյուղի միջակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետը՝ կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով «ԿՄՆԳՄԴ-ԳՀ-ԱՇՁԲ

_20/02/01» պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագրի միակողմանի լուծման ծանուցումը տեղադրելով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հիմք ընդունելով այն, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի ձեռնարկած գործողությունների արդյունքում առկա է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման և Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգ, ինչը սպառնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների ու բնակչության կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու, ինչպես նաև ելնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման անմիջական վտանգը կանխելու, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում ապահովելու նպատակից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը:

Բողոքներ քննող անձը, վերոնշյալները քննարկելով նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու

դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում (հոդված 1): Ռազմական դրություն հայտարարելու նպատակն է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ դիմակայել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում (հոդված 3):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս,*

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող

վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների չկատարումը ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու հանգամանքով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին էին դարձնում Մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը՝ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19756-2020 գրությամբ «Գայանե Մելիքյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/298 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**